

– Ի՛նչ վնաս, Խուրեն եղբայր, իմ տղայութեան յիշատակները նսրայ յիշատակաց հետ շաւղուած են. երթանք ուրեմն անգամ մ'ալ այդ երջանիկ օրերը յիշելու:

Եւ Խուրեն շտկուեցաւ հոն ճրագն ի ձեռին. եւ իրօք երբ ներս մտան միայն խորագննին ակնարկ մը ձգողը կրնար երեւակայել թէ բոլոր կահ եւ կարասիքը առանց պերճութեան կնոջ մը քնքուշ ընտրութեամբ գետեղեալ էին: Գորգեր, բաստեռունք, բազմոցք, վարագոյր, արկղ, գգրոց ամենայն յարմար եւ հաճոյ էին աչաց:

– Ուրեմն, իշխան, քեզ համար երթամ անկողին մը բերեմ,– ըսաւ Խուրեն:

– Ո՛չ, պէտք չի կայ,– ըսաւ իշխանը վճռական եւ հրամայական ձայնիւ:

Խուրեն ան ատեն ակնարկ մը ձգելով անգամ մը անկողնին փոքրկութեան վրայ եւ ակնարկ մը Գուրգէնի վիթխարի հասակին վրայ՝ լռիկ բաղդատութիւն մ'ընելով մտքէն, գլուխը քովստի մը շարժեց, եւ երկու ճրագները վառելով եւ Գրիգորի ձեռքի ջուրի փոքրիկ կուժն ալ դնելով կարասիքի մը վրայ՝

– Գիշեր բարի,– ըսաւ եւ քաշուեցաւ, միայն թողնելով իշխանը իւր վիթալից սրտին ամենատխուր ուրախութեան մէջ, որ Յեղինէի սենեակը ան գիշեր պիտի անց ըներ:

Մենք էլ կը թողունք իշխանը այդ սենեկին մէջ, կը թողունք հոն իր բոլոր հակասական դառն խորհրդածութեանց եւ կրից հետ, ուր սեր, ատելութիւն, վրեժխնդրութիւն, ներողամտութիւն, արհամարհանք, անցելոյն տղայութեան քաղցր յիշատակք իրար կը խառնուէին, կը կռուէին փոթորկացեալ ալեաց պէս, եւ ուր վերջապէս բնութիւն յաղթող ամենայն կրից իր իրաւունքն ի գործ դրաւ, եւ Գուրգէն խոր քունի մը մէջ ընկղմեցաւ: